ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Թույլ տրված վրիպակն ուղղելու մասին

28 նոյեմբերի 2025թ. ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Գ. Վարդանյան) 2025թ. նոյեմբերի 13-ի թիվ ԵԴ2/5330/02/25 վճռում թույլ տրված վրիպակն ուղղելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԳԱՌՈՒ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2025թ. մայիսի 22-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ թիվ «ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-21/44,60-ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-25-7/15» ծածկագրով փակ պարբերական մրցույթի գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությունը՝ «Արմոս» ՍՊ ընկերության ներկայացրած հայտը բավարար գնահատելու որոշման մասով, անվավեր ճանաչելու և որպես հետևանք «Արմոս» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու որոշումների մասերով անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանի 2025թ. նոյեմբերի 13-ի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 197 հոդվածի 1-ին համաձայն՝ դատական ակտում թույլ տրված վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին միջնորդությունը կարող է ներկայացվել, իսկ դատարանն իր նախաձեռնությամբ այդ գործողությունները կատարում է դատական ակտի կայացման պահից մինչև դրա կատարումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու հարցը դատարանը լուծում է առանց դատական նիստ հրավիրելու: Դատական ակտում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին միջնորդությունն առաջին ատյանի դատարանը պետք է քննի և լուծի այն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

Ուսումնասիրելով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Գ. Վարդանյան) 2025թ. նոյեմբերի 13-ի թիվ ԵԴ2/5330/02/25 վճիռը՝ Դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ վճռում թույլ են տրվել վրիպակներ, մասնավորապես՝ դատական ծախսերի բաշխման և վճռեց մասերում փորձագիտական հաստատության անվանումը ««Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ»-ի **փոխարեն նշվել է** ««ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ»:

Արդյունքում՝ Դատարանը եզրահանգում է, որ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Գ. Վարդանյան) 2025թ. նոյեմբերի 13-ի թիվ ԵԴ2/5330/02/25 վճռում թույլ տրված վրիպակները պետք է ուղղել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 197, 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Գ. Վարդանյան) 2025թ. նոյեմբերի 13-ի թիվ ԵԴ2/5330/02/25 վճռի դատական ծախսերի բաշխման և վճռեց մասերում փորձագիտական հաստատության անվանումը ««ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ»-ի **փոխարեն կարդալ** ««Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ»:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն ստանալուց հետո յոթնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ